

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԱՅՑԸ ՍՊԻՏԱԿ ԵՒ ԳԻՒՄՐԻ (7 Դեկտեմբեր 1994 թ.)

1994 թ. Դեկտեմբերի 7-ին, Երկրաշարժի 6-րդ տարելիցի օրը, Ամենայն Հայոց Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիւ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանը կառավարական պատուիրակութեան հետ, որը գլխաւորում էին ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատեանը և Գերագոյն Խորհրդի առաջին փոխ-նախագահ Արա Սահակեանը, այցելեց Սպիտակ և Գիւմրի՝ մասնակցելու ագոյ արարողութիւններին և իր մխիթարական հայրական խօսքով քաջալերելու տեղի բնակչութեանը: Այս առթիւ Ամենապատիւ Սրբազան Հօրը ուղեկցում էին Ծիրակի թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Բունիաթեանը և որպէս գաւազանակիր Հոգեշնորհ Տ. Միքայէլ Ծ. Վարդապետ Աջապահեանը:

Առաւօտեան ժամը 10.30-ին կառավարական պատուիրակութեան հետ Ամենապատիւ Սրբազան Հայրը այցելեց Սպիտակի շրջանի Զրաշէն գիւղի մօտակայ բարձունքի կառուցուած յուշահամալիրը, որտեղ տեղի ունեցաւ ծաղկեպսակների զետեղման արարողութիւն և հոգեհանգստեան պաշտօն:

Ապա մեքենաների շարասյունը ուղևորուեց դէպի Գիւմրի, որտեղ քաղաքային գերեզմանոցում ամփոփուած Երկրաշարժի անյայտ զոհերի շիրիմին կանգնուած Խաչքար յուշարձանին նոյնպէս ծաղկեպսակներ զետեղուեցին կառավարութեան և Մայր Աթոռի կողմից: Այստեղ նոյնպէս Տեղապահ Սրբազան Հօր նախագահութեամբ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն: Այնուհետև պատուիրակութիւնը այցելեց Գիւմրիի նորակառոյց Անի թաղամաս, որտեղ Պատրիարք Հօր օրհնութեամբ բացուեցին և բնակութեան հանձնուեցին երկու նորակառոյց շէնքեր:

Ժամը 13.00-ին պատուիրակութիւնը մասնակցեց Գիւմրիում տեղակայուած Ռուսական սահմանապահ զորքերի զորամասում կառուցուած յուշարձանի բացման արարողութեանը, որը նուիրուած էր Երկրաշարժի ժամանակ զոհուած զինուորականների և նրանց ընտանիքների անդամներին: Սգոյ արարողութեան ընթացքում յարգանքի խօսքով հանդէս եկան գնդի հրամանատարը, վարչապետը և Ամենապատիւ Տեղապահ Սրբազան Հայրը:

Ժամը 14.30-ին Ամենապատիւ Տ. Թորգոմ Պատրիարքը բաժանուելով կառավարական պատուիրակութիւնից, որը մեկնեց Վանաձոր, այցելեց Գիւմրիի առաջնորդանիստ Ս. Աստուածածին Մայր Եկեղեցին՝ ներկայ գտնուելու Ս. Պատարագի արարողութեանը և քարոզով մխիթարելու սգակիր հաւատացեալներին: Տաճարի մօտ Ամենապատիւ Սրբազան Հայրը դիմաւորուեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Սեպուհ վարդապետ Զուլչեանի և քահանայից դասի կողմից և առաջնորդուեց եկեղեցի, որտեղ նախագահեց հոգեհանգստեան արարողութեանը և ոգեշունչ քարոզով մխիթարեց հայ հաւատացեալ ժողովրդին: Սուրբ Պատարագին ներկայ էին Շիրակի տարածքաշրջանում ՀՀ կառավարութեան լիազոր ներկայացուցիչ Անդրանիկ Քոչարեանը և Գիւմրիի քաղաքապետ Միքայէլ Վարդանեանը:

Ս. Պատարագից յետոյ, ժամը 17.00-ին, Ամենապատիւ Սրբազան Հայրը այցելեց Շիրակի թեմի Հոգևոր դպրանոց, որտեղ դպրանոցի սաների և դասախօսական կազմի ջանքերով պատրաստուել էր ճոխ յայտագիր՝ նուիրուած Կոմիտաս վարդապետի և Յովհաննէս Թումանեանի ծննդեան 125 ամեակներին: Հանդէսը բացեց դպրանոցի տեսուչ պրն. Մեղրիկեանը, որից յետոյ ելոյթ ունեցաւ Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Բունիաթեանը: Յայտագրի կատարումից յետոյ, որը կազմուած էր զեկուցումից, արտասանութիւններից, երգերից, օրհնութեան խօսքով հանդէս եկաւ Տ. Թորգոմ Պատրիարքը: Հանդէսից յետոյ Ամենապատիւ Սրբազան Հայրը հանդիպում ունեցաւ դպրանոցի դասախօսական կազմի և ուսանողութեան հետ:

Ուշ երեկոյեան Տեղապահ Սրբազան Հայրը վերադարձաւ Մայր Աթոռ: